ԱԻԱԶ ԵՒ ԱՍՏՂԵՐ

(Ֆրուգից)

Հին ուխտի գրքում ես միշտ կարդում եմ՝ «Ազգ իմ հարազատ,
Սխրագործական քայլերիդ համար սերունդդ ազատ.
Պիտի բազմացնեմ որպէս աստղերը երկնակամարի,
Բիւր-բիւրոց դարձնեմ որպէս աւազը անհուն ծովերի»։

Օ՜, Աստուածաշունչ, Սուրբ Գիրք անդրանիկ՝ ստեղծագործութեան,
Քո հին էջերը երբ կարդում էի օրով մանկութեան,
Կամ՝ տեսնում էի անցած-գնացած բախտը մարդկութեան,
Հրճւում էի ես յաղթանակովը վեհ արդարութեան։

Այժմ ասա, Տէր, էր չիրագործուեց կտակիդ սուրբ էջ,
Տես, ժողովուրդդ հեծում, տնքում է հոգս ու ցաւի մէջ.
Աւազի տեղ ենք այժմ ծառայում աշխարհի համար,
Եւ ամեն երկրում, ամեն անցորդի լինում ոտնահար։

... Եւ այն աստղերը, որոց բազմութիւնն մեզ էր խոստացած,
Որ՞ւր են նրանք, Տէր... մեզ համար նրանք վաղուց են խամրած...

Թարգմ. ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ